Արձանագրություն N 2

2024 թվականի առողջապահության նախարարության կարիքների համար անհրաժեշտ դեղերի (տուբերկուլին) ձեռք բերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2024/12» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի արտահերթ նիստի

ք. Երևան

26» «Հունվարի» 2024թ.
ժամը 14:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ	Հ. Արույան
Հանձնաժողովի անդամներ	Ռ. Դոխոլյան, Լ. Սարատիկյան
Հանձնաժողովի քարտուղար	Հ. Սարգսյան

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

(Հ. Արույան)

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին,
2. ՀՀ պետական եկամուտների կողմից տրված պարզաբանման ննարկում,
3. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրված պարզաբանման ննարկում,
4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Ընթացակարգի հետագա ընթացքի մասին

(Հ. Արույան)

25.01.2024թ. գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Հարությունն Արույանի կողմից ստացվել է գրություն՝ 26.01.2024թ. ժամը 14:30-ին արտահերթ նիստ հրավիրելու վերաբերյալ: Գրությամբ ներկայացված էր նաև նիստի օրակարգը: Նույն օրը գնահատող հանձնաժողովի քարտուղարը մասնակցության հրավեր է ուղարկել նաև «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2024/12» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացրած մասնակիցներին իրենց հայտերում նշված էլեկտրոնային փոստի հասցեներին, սակայն նիստին մասնակցել է միայն «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Կարեն Թոփուզյանը:

Նիստի ժամանակ ննարկվել են հետևյալ հարցերը.

«ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2024/12» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացրած, սակայն հաղթող չճանաչված «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից 05.12.2023թ. ներկայացվել էր գրություն, ըստ որի վերջինս դիմել էր-Առողջապահության նախարարության գլխավոր քարտուղարին՝ առաջարկելով վերանայել գնման ընթացակարգի արդյունքները, մասնավորապես հաղթող մասնակից ճանաչված «Ագաստ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկի մասով, որը ներկայացվել էր ԱԱՀ-ով: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 67-րդ կետի պահանջները՝ 12.12.2023թ. գնահատող հանձնաժողովը որոշել էր կասեցնել գնման ընթացակարգի հայտերի գնահատումը և ՀՀ պետական եկամուտների կոմիտե է ներկայացվել գրություն՝ պարզաբանում տրամադրելու վերաբերյալ՝ «Ագաստ» ՍՊԸ-ի ներկայացրած գնային առաջարկի վերաբերյալ: 04.01.2024թ. ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացվել է պարզաբանում, որով ներկայացվել է,

ապրանքների ըստ ԵՏՄ ԱՏԳ ԱԱ դասակարգչի համապատասխան ծածկագրերի դասակարգումը կատարվում է հիմք ունենալով Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 14.09.2021թ. «Եվրասիական տնտեսական միության սնական մաքսային սակագինը և Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության սնական ապրանքային անվանացանկը հաստատելու մասին» N80 որոշմամբ սահմանված դասակարգման ոնները, սակայն չի տրամադրվել պարզաբանում՝ արդյոք ԵԱՏՄ երկրներում 3006 30 000 0 ԱՏԳ ԱԱ ծածկագրին դասվող ապրանքները երրորդ երկրներից այլ ԱՏԳ ԱԱ ծածկագրերով Հայաստանի Հանրապետություն մուծելու ժամանակ համապատասխանեցվում են 3006 30 000 0 ԱՏԳ ԱԱ ծածկագրին և վաճառքի ժամանակ ատվում ԱԱՀ-ից, հետագայում գնման ընթացակարգերին տվյալ ապրանքները առաջարկելուց մասնակիցները գնային աջարկները ներկայացնում են առանց ԱԱՀ-ի: Գնահատող հանձնաժողովը որոշել է դիմել ֆինանսների խարարություն՝ վերոգրյալ խնդրի կապակցությամբ, ակնկալելով ստանալ պարզաբանում՝ արդյոք ենթակա է ուժման «Ագաստ» ՍՊԸ-ի հայտը՝ գնային առաջարկը սխալ ներկայացնելու համար: 23.01.2024թ. ֆինանսների խարարությունից ստացվել է պարզաբանում, ըստ որի հայտերի գնահատման իրավասությունը վերապահված է նահատող հանձնաժողովին և նման խնդիրներից խուսափելու նպատակով, եթե գնման առարկայի ձեռքբերումն ատված է ԱԱՀ-ից, ապա դրա մասին հրավերում պետք է կատարել համապատասխան նշում: Քանի որ էլեկտրոնային ուրդում գնման ընթացակրգի հրավեր հրապարակելուց հնարավոր չէ խմբագրել հրավերը՝ ԱԱՀ-ից ազատված ելու մասին նշում կատարելով և ՀՀ պետական եկամուտների կոմիտեից չի ստացվել հստակ պարզաբանում՝ արդյոք ԵՏՄ երկրներում 3006 30 000 0 ԱՏԳ ԱԱ ծածկագրին դասվող ապրանքները երրորդ երկրներից այլ ԱՏԳ ԱԱ ծածկագրերով Հայաստանի Հանրապետություն ներմուծելու ժամանակ համապատասխանեցվում են 3006 30 000 0 ՏԳ ԱԱ ծածկագրին և վաճառքի ժամանակ ազատվում ԱԱՀ-ից, ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել գնման ընթացակարգի հայտերի գնահատումը և տեղեկացնել գնման ընթացակարգի հայտերի գնահատումը և տեղեկություն տալ Ագաստ» ՍՊԸ-ին, քանի որ վերջինիս կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը ներկայացված էր ավերի պահանջներին անհամապատասխան և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետը՝ ներկայացվելով էլեկտրոնային աճուրդ համակարգի միջոցով տեղեկացնում ետևյալ ծանուցումը.

«Ագաստ» ՍՊԸ

Հարգելի մասնակից:

«ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2024/12» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով եր կողմից ներկայացված մասնակցության հայտը, արձանագրել է անհամապատասխանություններ, որոնք ենթակա են տկման: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ ետի պահանջները խնդրում ենք մեկ աշխատանքային օրվա ընթացքում տեղեկել Ձեր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (տեխնիկական բնութագիրը) մասնավորապես՝ տեղեկել և ճիշտ ներկայացնել Ձեր կողմից առաջարկվող ապրանքի հստակ ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը և արտադրողի հստակ անվանումը: Շտկված տարբերակները ներբեռնել էլեկտրոնային աճուրդ համակարգ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Հ. Արույան)

«ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2024/12» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստ հրավիրել՝ 2024 թվականի հունվարի 30-ին՝ տեղեկություն արդյունքները հասանելի կլինեն, Առողջապահության նախարարություն, հասցեն՝ ք.Երևան, Կառավարական տուն 3, 2-րդ հարկ, նիստերի դահլիճ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Հ. Արույան

Անդամներ՝ _____ Ռ. Դոխոլյան

---------- Լ. Սարատիկյան

Քարտուղար՝ ---------- Հ. Սարգսյան